

ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2015-2016 ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ՈԼՈՐՏ

(քրեական գործեր, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող միջնորդություններ)

2016 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 4599 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 17717 միջնորդություն *(ընդհանուրը՝ $4599+17717=22316$)*:

Ստացված 4599 քրեական գործից ավարտվել է 2944-ը (64%):

Ստացված 17717 միջնորդություններից ավարտվել է 17290-ը (97,6%):


(Ընդհանուր առմամբ ավարտվել է 20234 դատական գործ $(2944+17290=20234)$ 90,7%):

*Համեմատության կարգով նշենք, որ 2015 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 4476 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 16292 միջնորդություն *(ընդհանուրը՝ $4476+16292=20768$)*:*

Ստացված 4476 քրեական գործից ավարտվել է 3100-ը (69,2%):

Ստացված 16292 միջնորդություններից ավարտվել է 15985-ը (98,1%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 19085 դատական գործ $(3100+15985=19085)$ 91,9%):



2016 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից ավարտված 2944 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 3819 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 2645 գործով (89,8%) կայացվել է դատավճիռ՝ 3469 անձի նկատմամբ, 244 գործով (8,3%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 295 անձի վերաբերյալ, 54 գործով (1,8%)՝ 54 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ, իսկ 1 գործով 1 անձ ազատվել է քրեական պատասխանատվությունից:

Համեմատության կարգով նշենք, որ 2015 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից ավարտված 3100 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 3979 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 2784 գործով (89,8%) կայացվել է դատավճիռ՝ 3606 անձի նկատմամբ, 253 գործով (8,2%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 307 անձի վերաբերյալ, 63 գործով (2%)՝ 66 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ:

ՀՀ դատարանների կողմից կայացվել է 160 դատական ակտ 187 անձի ($187:3764*100=5\%$) վերաբերյալ, որից 140 անձ ձեռք է բերել լրիվ արդարացվածի կարգավիճակ, իսկ 47 անձ՝ մասնակի արդարացվածի կարգավիճակ¹:

Արդարացվածների վերաբերյալ կայացված 160 դատական ակտերից 71 դատական ակտ (59-ը լրիվ, 12-ը մասնակի)՝ 76 անձի վերաբերյալ (63-ը լրիվ, 13-ը մասնակի), 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մտել է օրինական ուժի մեջ:

*Համեմատության կարգով նշենք, որ 2015 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 157 ($157:3913*100=4\%$) անձ, որից 110-ը ($110:3913*100=2,8\%$)՝ լրիվ, իսկ 47-ը ($47:3883*100=1,2\%$)՝ մասնակի:*

Այսինքն, 2015 թվականի համեմատությամբ 2016 թվականին արդարացվածների քանակն աճել է 30-ով (19.1%):

2016 թվականի ընթացքում դատապարտվել է 3339 ($3469-(140-10)=3339$) 96.2% ($3339:3469*100=96.2\%$) անձ, որից 2533 անձի նկատմամբ կայացված դատավճիռները հաշվետու ժամանակահատվածում մտել են օրինական ուժի մեջ:

Հիշյալ 2533 անձանցից՝

- ազատագրվման ձևով պատիժ է նշանակվել 1449 (57,2%) անձի նկատմամբ,

-կալանքի ձևով՝ 157 (6,2%) անձի նկատմամբ,

¹ Հիշյալ թվերի մեջ ներառված են նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ դատարանների կողմից կայացված որոշումները (8 դատական ակտ՝ 10 անձի վերաբերյալ):

-կարգապահական գումարտակում պահելու ձևով՝ 71 (2,8%) անձի նկատմամբ,

-տուգանքի ձևով՝ 806 (31,8%) անձի նկատմամբ:

Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 869 անձի նկատմամբ
($869:(1449+157+71)*100=51.8\%$):

*Համեմատության կարգով նշենք, որ 2015 թվականի ընթացքում դատապարտվել է 3505 (3606-(110-9)=3505) 97.2% (3505:3606*100=97.2%) անձ, որից 2844 անձի նկատմամբ կայացված դատավճիռները հաշվետու ժամանակահատվածում մտել են օրինական ուժի մեջ:*

Հիշյալ 2844 անձանցից՝

- ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 1549 (54,5%) անձի նկատմամբ,

-կալանքի ձևով՝ 265 (9,3%) անձի նկատմամբ,

-կարգապահական գումարտակում պահելու ձևով՝ 156 (5,5%) անձի նկատմամբ:

-տուգանքի ձևով՝ 807 (28,4%) անձի նկատմամբ:

*Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 977 անձի նկատմամբ,
(977:(1549+265+156)*100=49,6%):*

*Այսպիսով, 2016 թվականի ընթացքում՝ 2015 թվականի համեմատությամբ, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացված քրեական գործերի քանակն ավելացել է 123-ով ($4599-4476=123$) 2,7% ($123:4476*100=2,7\%$), ըստ ավարտված գործերի՝ դատի տրված անձանց թիվը նվազել է 160-ով ($3979-3819=160$) 4% ($160:3979*100=4\%$), դատապարտվածների թիվը նվազել է 166-ով ($3505-3339=166$) 4,7% ($166:3505*100=4,7\%$), դատապարտյալների թիվը նվազել է 311-ով ($2844-2533=311$) 10,9% ($311:2844*100=10,9\%$), անձանց թիվը, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել նվազել է 108-ով ($977-869=108$) 11% ($108:977*100=11\%$), իսկ արդարացվածների թիվն աճել է 30-ով ($187-157=30$) 19,1% ($30:157*100=19,1\%$):*

Հարկ է նշել, որ ինչպես 2015 թվականին, այնպես էլ 2016 թվականին դատապարտված անձանց թվում որոշակի նվազումներով հանդերձ զգալի թիվ են կազմել գողության, առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, ինչպես նաև զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործություններից՝ ստորադատության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելու համար դատապարտվածները:

Այսպես.

- 2015 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված) դատապարտվել է 506 անձ (դատապարտվածների թվի 14,4%-ը, $506:3505*100=14,4\%$), առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)՝ 305 անձ (դատապարտվածների թվի 8,7%-ը, $305:2533*100=12\%$), ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում զինձառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդված)՝ 189 անձ (դատապարտվածների թվի 5,4%-ը, $189:3505*100=5,4\%$):

- 2016 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված)՝ 476 անձ (դատապարտվածների թվի 14,2%-ը, $476:2533*100=18,8\%$), առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)՝ 248 անձ (դատապարտվածների թվի 7,4%-ը, $248:2533*100=9,8\%$), ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում զինձառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդված)՝ 101 անձ (դատապարտվածների թվի 3%-ը, $101:2533*100=3,9\%$): ՀՀ քր. օր-ի 359-րդ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2013 թվականին դատապարտվել է 300 անձ, 2014 թվականին՝ 238 անձ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 268 հոդվածով՝ 2013 թվականին դատապարտվել է 322 անձ, իսկ 2014 թվականին՝ 272 անձ:

Այսպիսով, 2016 թվականի ընթացքում՝ 2015 թվականի համեմատությամբ դատապարտյալների թիվը գողության հանցակազմով նվազել է 30-ով ($506-476=30$) 5,9% ($30:506*100=5,9\%$), առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար դատապարտվածների թիվը նվազել է 57-ով ($305-248=57$) 18,7% ($57:305*100=18,7\%$), ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում զինձառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու համար դատապարտվածների թիվը նվազել է 88-ով ($189-101=88$) 46,6% ($88:189*100=46,6\%$):

Ի դեպ, զգալի նվազում է արձանագրվել նաև համեմատվող ժամանակահատվածում դիտարկված ներքոհիշյալ հանցագործությունների համար դատապարտվածների (դատապարտյալների) թվում:

Այսպես.

- Գիտավորությանը առողջությանը ծանր վնաս պատճառելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 86 անձ, իսկ 2016 թվականին՝ 79, նվազումը՝ 7 ($86-79=7$) անձ (8,1%): Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հիշյալ հոդվածով 2014 թվականին դատապարտվել է 106 անձ:

- Մարդուն առևանգելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 69 անձ, իսկ 2016 թվականին՝ 46, նվազումը՝ 23 ($69-46=23$) անձ (33,3%):

- Ավագակության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 36 անձ, իսկ 2016 թվականին՝ 25, նվազումը՝ 11 ($36-25=11$) անձ (30,5%):

- Կողոպուտի համար (ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 62 անձ, իսկ 2016 թվականին՝ 53, նվազումը՝ 9 ($62-53=9$) անձ (14,5%):

- Յուրացնելու կամ վատնելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 60 անձ, իսկ 2016 թվականին՝ 53, նվազումը՝ 7 ($60-53=7$) անձ (11,7%):

- Շորթման համար (ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 12 անձ, իսկ 2016 թվականին՝ 4, նվազումը՝ 8 ($12-4=8$) անձ (66,7%):

- Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 101 անձ, իսկ 2016 թվականին՝ 72, նվազումը՝ 29 ($101-72=29$) անձ (28,7%):

- Խուլիգանության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 115 անձ, իսկ 2016 թվականին՝ 79, նվազումը՝ 36 ($115-79=36$) անձ (31,3%): Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հիշյալ հոդվածով 2011 թվականին դատապարտվել է 502 անձ, 2012 թվականին՝ 299, 2013 թվականին՝ 178, իսկ 2014 թվականին՝ 133 անձ:

- Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 17 անձ, իսկ 2016 թվականին՝ 8, նվազումը՝ 9 ($17-8=9$) անձ (52,9%): Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հիշյալ հոդվածով 2014 թվականին դատապարտվել է 22 անձ:

- Կաշառք տալու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 11 անձ, իսկ 2016 թվականին՝ 2, նվազումը՝ 9 ($11-2=9$) անձ (81,8%):

Միաժամանակ, աճ է արձանագրվել ստորև ներկայացվող՝ դիտարկված հանցագործությունների համար դատապարտվածների (դատապարտյալների) թվում:

Այսպես.

- Սպանության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 17 անձ, իսկ 2016 թվականին՝ 21, աճը՝ 4 ($21-17=4$) անձ (23,5%):

- Գիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 14 անձ, իսկ 2016 թվականին՝ 23, աճը՝ 9 ($23-14=9$) անձ (64,3%):

- Ծեծի համար (ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 34 անձ, իսկ 2016 թվականին՝ 72, աճը՝ 38 ($72-34=38$) անձ:

- Գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 12 անձ, իսկ 2016 թվականին՝ 24, աճը՝ 12 ($24-12=12$) անձ:

- Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 82 անձ, իսկ 2016 թվականին՝ 116, աճը՝ 34 ($116-82=34$) անձ (41,5%):

-Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 311.1-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 2 անձ, իսկ 2016 թվականին՝ 10, աճը՝ 8 ($10-2=8$) անձ:

-Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 54 անձ, իսկ 2016 թվականին՝ 75, աճը՝ 21 ($75-54=21$) անձ (38,9%):

- Սուտ մատնության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդված) 2015 թվականին դատապարտվել է 64 անձ, իսկ 2016 թվականին՝ 74, աճը՝ 10 ($74-64=10$) անձ (15,6%):

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող միջնորդություններ

2016 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված 17717 միջնորդություններից 16207-ը (91,5%) վերաբերել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 2563-ը (15,8%) ($2563:16207*100=15,8\%$) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2563 միջնորդություններից 2379-ը (92,8%) ($2379:2563*100=92,8\%$) բավարարվել է, 13-ը (0,5%) ($13:2563*100=0,5\%$) բավարարվել է մասնակի, 163-ը (6,4%)

(163:2563*100=6,4%)՝ մերժվել, իսկ 8-ը (0,3%) (8:2563*100=0,3%) թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 772 միջնորդություն, որից 161-ը (20,9%) բավարարվել է, 8-ը բավարարվել է մասնակի (1%), 588-ը (76,2%)՝ մերժվել, 12-ը (1,5%)՝ թողնվել է առանց քննության, իսկ 3-ը (0,4%)՝ 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

*Համեմատության կարգով նշենք, որ 2015 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված 16292 միջնորդություններից 14759 (90,6%)՝ վերաբերել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 2452-ը (16,6%) (2452:14759*100=16,6%) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2452 միջնորդություններից 2263-ը (92,3%) (2263:2452*100=92,3%) բավարարվել է, 11-ը (0,4%) (11:2452*100=0,4%) բավարարվել է մասնակի, 154-ը (6,3%) (154:2452*100=6,3%)՝ մերժվել, իսկ 24-ը (1%) (24:2452*100=1%) թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 604 միջնորդություն, որից 112-ը (18,5%) բավարարվել է, 460-ը (76,2%)՝ մերժվել, 27-ը (4,5%)՝ թողնվել է առանց քննության, իսկ 5-ը (0,8%)՝ 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:*

Այսպիսով, 2015 թվականին ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված միջնորդությունների թիվն աճել է 1425-ով (8,7%):

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2016 թվականի ընթացքում ստացվել է 3588 վերաքննիչ բողոք՝ 3299 դատական ակտի դեմ (*այսինքն՝ բողոքարկվել է ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացված դատական ակտերի 16,3%-ը (3299:20234*100=16,3%)*): Բերված բողոքներից 1488-ով (41,5%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1240 դատական ակտ, իսկ մնացած՝ 2100-ով (58,5%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 2059 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1240 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 996-ով (80,3%), այդ թվում՝ 628 (63,1%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 272-ը (27,3%) քեկանվել է, 57-ը (5,7%) թողնվել է առանց քննության, 39-ով (3,9%) վերաքննիչ

վարույթը կարճվել է: Բեկանված 272 ակտերից 50-ով (18,4%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության, 222-ով (81,6%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված 2100 բողոքներից բավարարվել է 288-ը (13,7%), մերժվել՝ 1526 (72,7%), 52-ը (2,5%) թողնվել է առանց քննության, 36-ով (1,7%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 198-ը (157 դատական ակտի դեմ) (9,4%) 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել են անավարտ:

Բողոքարկված 3299 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 3588 բողոքներից 922-ը (25,7%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 201 (21,8%) բողոքի քննություն 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 721 (922-201=721) բողոքներից 275-ը (38,1%) բավարարվել է, 396-ը (54,9%)՝ մերժվել, 20-ով (2,8%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 30-ով (4,2%)՝ բողոքը թողնվել է առանց քննության:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2015 թվականի ընթացքում ստացվել է 3064 վերաքննիչ բողոք՝ 2850 դատական ակտի դեմ (այսինքն՝ բողոքարկվել է ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացված դատական ակտերի ընդամենը 14,9%-ը ($2850:19085*100=14,9\%$)): Բերված բողոքներից 1402-ով (45,8%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1188 դատական ակտ, իսկ մնացած՝ 1662-ով (54,2%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 1662 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1188 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1024-ով (86,2%), այդ թվում՝ 691 (67,5%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 276-ը (26,9%) բեկանվել է, 25-ը (2,4%) թողնվել է առանց քննության, 32-ով (3,2%) վերաքննիչ վարույթը կարճվել է: Բեկանված 276 ակտերից 34-ով (12,3%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության, 242-ով (87,7%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված 1662 բողոքներից (1662 դատական ակտերի դեմ) բավարարվել է 176-ը (10,6%), մերժվել՝ 1286-ը (1286 դատական ակտերի դեմ) (77,3%), 31-ը (31 դատական ակտերի դեմ) (1,9%) թողնվել է առանց քննության, 31-ով (31 դատական ակտերի դեմ) (1,9%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 138-ը (138 դատական ակտերի դեմ) (8,3%) 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել են անավարտ:

Բողոքարկված 2850 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 3064 բողոքներից 883-ը (28,8%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 122 (13,8%) բողոքի քննություն 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 761 (883-122=761) բողոքներից 163-ը (21,4%) բավարարվել է, 590-ը (77,5%)՝ մերժվել, 3-ով (0,4%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 5-ով (0,7%)՝ բողոքը թողնվել է առանց քննության:

*Այսպիսով, 2016 թվականի ընթացքում ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում ստացված բողոքների ընդհանուր թիվն աճել է 524-ով (3588-3064=524) 17,1% (524:3064*100=17,1%), այդ թվում՝ քրեական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվն աճել է 86-ով (1488-1402=86) 6,1% (86:1402*100=6,1%), մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվն աճել է 438-ով (2100-1662=438) 26,3% (438:1662*100=26,3%):*

Քրեական գործերով ավարտված վերաքննիչ վարույթների թիվը նվազել է 28-ով (1024-996=28) 2,7%, անփոփոխ թողնված դատական ակտերի թիվը նվազել է 63-ով (691-628=63) 9,1%, իսկ բեկանվածների թիվը նվազել է 4-ով (276-272=4) 1,4%:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված բողոքներից բավարարվածների թիվն աճել է 112-ով (288-176=112) 63,6%, մերժվածների թիվն աճել է՝ 240-ով (1526-1286=240) 18,7%, առանց քննության թողնվածների թիվն աճել է 21-ով (52-31=21) 67,7%, վերաքննիչ վարույթի կարճումների թիվն աճել է 5-ով (36-31=5) 16,1%:

Այսպիսով, բերված բողոքների ընդհանուր թիվն աճել է 524-ով (3588-3064=524) 17,1%, ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների ընդհանուր թիվն աճել է 108-ով ((272+288=560)-(276+176=452)=108)) 23,9%, իսկ մերժվածների թիվը՝ 177-ով ((628+1526=2154)-(691+1286=1977)=177)) 8,9%:

Դատախազության կողմից բերված բողոքների ընդհանուր թիվն աճել է 39-ով (922-883=39) 4,4%, այդ թվում՝ ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների թիվն աճել է 112-ով (275-163=112) 68,7%, իսկ մերժվածների թիվը նվազել է 194-ով (590-396=194) 32,9%:

Այսպիսով, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2016 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 20234 (2944+17290=20234) դատական ակտերից բողոքարկվել է 3299-ը՝ 16,3%-ը (3299:20234*100=16,3%), որից բեկանվել է 551-ը (272+288-9=551) 16,7% (560-9=551, նշված 9 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից կայացված թվով 9

*դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտերին օրինական ուժ տալու դեպքերը), այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2016 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 97,3% ($20234-551=19792:20234*100=97,3\%$), իսկ բողոքարկված գործերի կայունությունը կազմում է 83,3% ($3299-551=2748:3299*100=83,3\%$):*

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2016 թվականի ընթացքում ստացվել է 1781 (ստացված 1572+209 փոխանցված) վճռաբեկ բողոքներ, որոնցով բողոքարկվել է 1332 դատական ակտ:

Բերված 1781 բողոքներից 366-ը (20,6%) վերադարձվել է, 72-ը (4%) ընդունվել է վարույթ, 157-ը (8,8%)՝ թողնվել է առանց քննության, 922-ով (51,8%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 13-ով (0,7%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 251 (14,1%) բողոքի ընթացքը 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 72 բողոքներից՝

-7-ը (վարույթ ընդունածի 9,7%, ընդհանուր բողոքների 0,4%) մերժվել է,

-28-ը (վարույթ ընդունածի 38,9%, ընդհանուր բողոքների 1,6%) բավարարվել է ամբողջությամբ,

-24-ը (վարույթ ընդունածի 33,3%, ընդհանուր բողոքների 1,3%)՝ բավարարվել է մասնակի,

-13-ը (վարույթ ընդունածի 18,1%, ընդհանուր բողոքների 0,7%) 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 28 բողոքներից 9-ով բեկանվել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

Բերված 1781 բողոքներից 224-ը (12,6%) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 34-ն (15,2%) ընդունվել է վարույթ, 15-ը (6,7%) թողնվել է առանց քննության, 1-ով (0,4%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 10-ը (4,5%) վերադարձվել է, 127-ով (56,7%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 37-ի (16,5%) ընթացքը 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 34 բողոքներից 12-ը բավարարվել է ամբողջությամբ, 12-ը բավարարվել է մասնակի, 3-ը մերժվել է, իսկ 7-ը 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Բերված 1781 բողոքներից 1557-ը (87,4%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 38-ը (2,4%) ընդունվել է վարույթ, 142-ը (9,1%) թողնվել է առանց քննության, 12-ով (0,8%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 356-ը (22,9%) վերադարձվել է, 795-ով (51,1%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 214-ը (13,7%) 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 38 բողոքներից 16-ը բավարարվել է ամբողջությամբ, 12-ը բավարարվել է մասնակի, 4-ը մերժվել է, իսկ 6-ը 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2015 թվականի ընթացքում ստացվել է 1455 (ստացված 1269+186 փոխանցված) վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է 1056 դատական ակտ:

Բերված 1455 բողոքներից 376-ը (25,8%) վերադարձվել է, 77-ը (5,3%) ընդունվել է վարույթ, 93-ը (6,4%) թողնվել է առանց քննության, 695-ով (47,8%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 10-ով (0,7%) նոր հանգամանքի հիմքով դատական ակտը վերանայվել և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 10-ով (0,7%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 194 (13,3%) բողոքի ընթացքը 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 77 բողոքներից`

-4-ը (վարույթ ընդունածի 5,2%, ընդհանուր բողոքների 0,3%) մերժվել է,

-38-ը (վարույթ ընդունածի 49,3%, ընդհանուր բողոքների 2,6%) բավարարվել է ամբողջությամբ,

-20-ը (վարույթ ընդունածի 26%, ընդհանուր բողոքների 1,4%)` բավարարվել է մասնակի,

-15-ը (վարույթ ընդունածի 19,5%, ընդհանուր բողոքների 1%) 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 38 բողոքներից 8-ով բեկանվել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

Բերված 1455 բողոքներից 149-ը (10,2%) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 35-ն (23,5%) ընդունվել է վարույթ, 1-ը (0,7%) թողնվել է առանց քննության, 10-ը (6,7%) վերադարձվել է, 66-ով (44,3%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 37-ի (24,8%) ընթացքը 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 35 բողոքներից 13-ը բավարարվել է ամբողջությամբ, 7-ը բավարարվել է մասնակի, 3-ը մերժվել է, իսկ 12-ը 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Բերված 1455 բողոքներից 1306-ը (89,8%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 42-ը (3,2%) ընդունվել է վարույթ, 92-ը (7%) թողնվել է առանց

քննության, 10-ով (0,8%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 366-ը (28%) վերադարձվել է, 629-ով (48,2%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 10-ով (0,8%) նոր հանգամանքի հիմքով դատական ակտը վերանայվել և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 157-ը (12%) 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 42 բողոքներից 25-ը բավարարվել է ամբողջությամբ, 13-ը բավարարվել է մասնակի, 1-ը մերժվել է, իսկ 3-ը 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Այսպիսով, 2016 թվականի ընթացքում՝ 2015 թվականի համեմատությամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական սպալատում ստացված ընդհանուր բողոքների քանակն ավելացել է 326-ով ($1781-1455=326$) 22,4%, բողոքարկված դատական ակտերի թիվը՝ 276-ով ($1332-1056=276$) 26,1%, մերժված բողոքների թիվն ավելացել է 3-ով ($7-4=3$), ամբողջությամբ բավարարվածների թիվը նվազել է 10-ով ($38-28=10$) 26,3%, իսկ մասնակի բավարարվածների թիվն ավելացել է 4-ով ($24-20=4$) 16,7%:

Դատախազության կողմից բերված բողոքների թիվն ավելացել է 75-ով ($224-149=75$) 50,3%, ամբողջությամբ բավարարվածների թիվը նվազել է 1-ով ($13-12=1$), իսկ մասնակի բավարարվածների թիվն ավելացել է 5-ով ($12-7=5$):

Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքների թիվն աճել է 251-ով ($1557-1306=251$) 19,2%: Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքներից մերժվածների թիվն ավելացել է 3-ով ($4-1=3$), ամբողջությամբ բավարարվածների թիվը նվազել 9-ով ($25-16=9$) 36%, մասնակի բավարարվածների թիվը նվազել է 1-ով ($13-12=1$):

*Այսպիսով, ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2016 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 2898 ($996+2059-157=2898$ դատական ակտերից վճռաբեկության կարգով բողոքարկվել է 1332-ը (45,9%), որոնցից բեկանվել է 52-ը ($28+24=52$) 3,9%, այսինքն՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2016 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 98,2% ($2898-52=2846:2898*100=98,2%$), իսկ բողոքարկված դատական ակտերի կայունությունը կազմում է 96,1% ($1332-52=1280:1332*100=96,1%$):*

Այսպիսով, քրեական գործերով և միջնորդություններով ընդհանուր կայունությունը կազմում է 97,1% (Զայլ 1-ին՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 551-ը ($560-9=551$, նշված 9 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից կայացված թվով 9 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտերին օրինական ուժ տալու դեպքերը), զումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական սպալատի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 43-ին ($52-9=43$, նշված 9 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 9 դատական ակտերը

*բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու դեպքերը), ստացվել է 594 բեկանված դատական ակտ: Քայլ 2-րդ՝ ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված դատական ակտերի թվից՝ 20234-ից, հանվել է բեկանված դատական ակտերի թիվը՝ 594-ը, ստացվել է 19640, այսինքն՝ 19640 դատական ակտ մնացել է օրինական ուժի մեջ, ուստի դատական ակտերի ընդհանուր կայունությունը կազմում է 97,1% ($20234-594=19640:20234*100=97,1\%$):*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2016 թվականի ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է 132581 քաղաքացիական գործ, որից՝

- 6866 գործով (5,2%) հայցադիմումը վերադարձվել է,

- 193 գործով (0,1%) հայցադիմումի ընդունումը մերժվել է,

- 125500 (94,6%) գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ,

- 22 (0,1%) հայցադիմումի վերաբերյալ 30.12.2016թ. դրությամբ որոշում չի կայացվել:

Վարույթ ընդունված 125500 գործերից՝

- 80257-ով (63,9%) կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 60477-ը (վճիռների 75,4%), հայցի մասնակի բավարարմամբ՝ 8865-ը (վճիռների 11%), հայցի մերժմամբ՝ 2785-ը (վճիռների 3,5%), վարույթի կարճմամբ՝ 8130-ը (վճիռների 10,1%), ընդ որում՝ կարճված վճիռներից 1275-ով (վճիռների 1,6%, կարճված վարույթների՝ 15,7%) հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,

- 55 հայց թողնվել է առանց քննության,

(ընդհանուր առմամբ կայացվել է 87371 դատական ակտ՝ $6866+193+80257+55$),

- 87 գործերով կայացվել են մեկ վարույթում միացնելու մասին որոշումներ,

- 45101-ը՝ (ստացված գործերի 34%, վարույթ ընդունված գործերի 35,9%) անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ 2015 թվականի ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է 117654 քաղաքացիական գործ, որից՝

- 6385 գործով (5,4%) հայցադիմումը վերադարձվել է,

- 240 գործով (0,2%) հայցադիմումի ընդունումը մերժվել է,

- 110989 (94,3%) գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ,

- 40 (0,1%) հայցադիմումի վերաբերյալ 30.12.2015թ. դրությամբ որոշում չի կայացվել:

Վարույթ ընդունված 110989 գործերից՝

- 71293-ով (64,2%) կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 54620-ը (վճիռների 76,6%), հայցի մասնակի բավարարմամբ՝ 6666-ը (վճիռների 9,3%), հայցի մերժմամբ՝ 3048-ը (վճիռների 4,3%), վարույթի կարճմամբ՝ 6959-ը (վճիռների 9,8%), ընդ որում՝ կարճված վճիռներից 1033-ով (վճիռների 1,4%) հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,


- 56 հայց թողնվել է առանց քննության,

(ընդհանուր առմամբ կայացվել է 77974 դատական ակտ՝ 6385+240+71293+56),

- 337 գործով կայացվել է գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշում, 150 գործերով կայացվել են մեկ վարույթում միացնելու մասին որոշումներ,

- 39153-ը՝ (ստացված գործերի 33,3%, վարույթ ընդունված գործերի 35,3%) անավարտ է:

*Այսպիսով, 2016 թվականի ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարաններում քաղաքացիական գործերի թիվն ավելացել է 14927-ով (132581-117654=14927)՝ 12,7%-ով (14927:117654*100=12,7%), հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումների թիվը նվազել է 47-ով (240-193=47)՝ 19,6%, վերադարձված հայցադիմումների թիվն ավելացել է 481-ով (6866-6385=481)՝ 7,5%:*



2016 թվականի ընթացքում կայացված 80257 վճիռներով կողմերի միջև հաշտության համաձայնություն է կնքվել 1275-ով՝ 1,6%-ով, այսինքն՝ մոտ 63 քաղաքացիական գործից 1-ն ավարտվել է հաշտության համաձայնությամբ, 2015 թվականի ընթացքում կայացված 71293 վճիռներով կողմերի միջև հաշտության համաձայնություն է կնքվել 1033-ով՝ 1,4%, այսինքն՝ մոտ 69 քաղաքացիական գործից 1-ն ավարտվել է հաշտության համաձայնությամբ:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ 2016 թվականին կողմերի միջև հաշտության համաձայնությամբ ավարտված գործերի թիվն ավելացել է:

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՉԱԿԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐ

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2016 թվականի ընթացքում ստացվել է 60017 վճարման կարգադրություն արձակելու դիմում, մինչդեռ 2015 թվականի ընթացքում ստացվել է 76981 վճարման կարգադրություն արձակելու դիմում: Այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2016 թվականին ստացված վճարման կարգադրությունների թիվը նվազել է 16964-ով (76981-60017=16964) 22%:

ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐ

